

# Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ կայուն եկամտային ֆոնդ

Ամսական տեղեկատվություն

31/12/2016

OBLIGATAIRE

## Ֆինանսական տեղեկատվություն

Մեկ փայի զուտ ակտիվների արժեք : 1251,25 ( ՅՅ դրամ )  
 Ամսաթիվ, որի դրությամբ ներկայացված է զուտ ակտիվների արժեքը : 30/12/2016  
 Կառավարման ներքո գտնվող ակտիվներ : 519,82 ( միլիոն ՅՅ դրամ )

## Ներդրումային քաղաքականությունը


Ներդրումային թիմը ձգտում է առավելագույնի հասցնել ակտիվների եկամտաբերությունը՝ ներդրումներ իրականացնելով միայն ֆիքսված եկամտային արժեթղթերում: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ՅՅ դրամով և արտարժույթով արտահայտված փողի շուկայի գործիքներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում, բանկային ավանդներում, ինչպես նաև ներդրումային ֆոնդերում, որոնք ներդրումներ են իրականացնում բացառապես վերուշյալ ֆինանսական գործիքներում:

## Ֆոնդի հիմնական բնութագրիչները

Իրավական ձև : Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ  
 Ֆոնդի ստեղծման ամսաթիվը : 11/03/2014  
 Բաժանորդագրության վճարը : 0%  
 Կառավարչի պարգևավճարի մեծությունը՝ ներառյալ պահառուի պարգևավճարը (%) : 1,00%  
 Մարման վճարի առավելագույն մեծությունը (%) : 2,00%  
 Պարգևավճար՝ կախված եկամտաբերությունից : 0%

## Ֆոնդի եկամտաբերությունը

### Ֆոնդի եկամտաբերությունը ստեղծման պահից (100-ի նկատմամբ)



### Եկամտաբերության վերլուծական տվյալներ

	Ստեղծման պահից
Առավելագույն անկումը	-12,15%
Վերականգնման ժամանակահատված	414
Վատագույն ամիս	12/2014
Վատագույն ամսվա եկամտաբերությունը	-9,42%
Լավագույն ամիս	09/2016
Լավագույն ամսվա եկամտաբերությունը	2,42%

## Եկամտաբերություն (տարեկանացված)

Սկսած	Տարվա սկզբից՝ սկսած	1 ամսվա	3 ամիսների	1 տարվա	3 տարիների	5 տարիների	Ստեղծման պահից՝ սկսած
Ֆոնդ	18,57%	1,72%	3,73%	18,57%	-	-	8,31%

## Ռիսկայնության վերլուծական տվյալներ

	1 տարի	3 տարի	5 տարի	Ստեղծման պահից
Ֆոնդի ռիսկայնությունը	2,02%	-	-	4,86%

Ֆոնդի ռիսկայնությունը բնութագրվում է տատանողականության (volatility) ցուցանիշով: Վերջինս վիճակագրական ցուցանիշ է, որով չափվում է ակտիվի արժեքի տատանողականությունը իր միջին արժեքի շուրջ: Որքան ավելի բարձր է տատանողականության ցուցանիշի արժեքը, այնքան ավելի ռիսկային է ակտիվը:


Ֆոնդի եկամտաբերության ցուցանիշները հաշվարկվում են ՅՅ դրամով և ներառում են կառավարչի պարգևավճարը, միջնորդավճարները և պահառուության վճարները: Ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է ՅՅ կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ով սահմանված կարգով: Ֆոնդի ռիսկայնությունը հաշվարկվում է Ամունդի խմբի մեթոդաբանության հիման վրա՝ հիմք ընդունելով շաբաթական եկամտաբերության ցուցանիշները: Շաբաթի գործակիցը հաշվարկվում է Ամունդի խմբի մեթոդաբանության հիման վրա՝ որպես անմիակ տոկոսադրույք ընդունելով 90 օրական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը: Ներդրումների արժեքը, ինչպես նաև նրանցից ակնկալվող եկամուտները կարող են նվազել, ինչպես նաև աճել: Ֆոնդերի նախկին եկամտաբերության ցուցանիշները չեն հանդիսանում վստահելի կողմնորոշիչ ընթացիկ կամ ապագա եկամտաբերության ցուցանիշների համար: Եկամտաբերության ցուցանիշները չեն արտացոլում փայերի թողարկման կամ մարման ժամանակ մասնակիցների կրած ծախսերը:

## Ֆոնդերի կառավարչի մեկնաբանությունը


Դեկտեմբեր ամսվա ընթացքում ֆոնդի ընդհանուր ակտիվներում եականորեն ավելացրել ենք արտասահմանյան պարտատոմսերի կշիռը մինչև ֆոնդի ակտիվների 11%-ը՝ Նախորդ ամսվա 7%-ի դիմաց, ինչպես նաև ՀՀ կորպորատիվ պարտատոմսերի կշիռը մինչև ֆոնդի ակտիվների 28%-ը՝ Նախորդ ամսվա վերջի 26%-ի դիմաց: Նշված ժամանակահատվածում ֆոնդի ակտիվների այլ դասերի կշիռները նվազել են: Ամսվա ընթացքում եականորեն ավելացրել ենք նաև արտարժույթային ներդրումների կշիռը՝ հասցնելով այն ֆոնդի ակտիվների ավելի քան 35%-ի՝ Նախորդ ամսվա վերջի 31.6%-ի դիմաց: Ինչ վերաբերում է ֆոնդի եկամտաբերության ցուցանիշներին, լքենք, որ դեկտեմբեր ամսվա ընթացքում դրանք բարելավվել են՝ պայմանավորված թե՛ տեղական, և թե՛ արտասահմանյան գործիքների գների աճով:

## Ֆոնդի կառուցվածքը

Կառուցվածքը՝ ըստ ակտիվների դասերի



Կառուցվածքը՝ ըստ արժույթների




## Կառավարման ներքո գտնվող ակտիվների շարժը

Ամսաթիվ	Կառավարման ներքո գտնվող ակտիվներ	Մեկ փայի զուտ ակտիվների արժեք
29/07/2016	418662544	1163,99
31/08/2016	425566942	1177,79
30/09/2016	435860348	1206,28
31/10/2016	478322096	1219,96
30/11/2016	487813064	1230,08
30/12/2016	519820198	1251,25

**Ֆոնդի կառուցվածքը/պարտատոմսերի վերլուծություն**


**Կառուցվածքը՝ ըստ թողարկողի տեսակի**

% ակտիվների նկատմամբ




**Կառուցվածքը՝ ըստ վարկանիշերի**

% ակտիվների նկատմամբ




**Կառուցվածքը՝ ըստ արժույթների**



**Կառուցվածքը՝ ըստ երկրների**

% ակտիվների նկատմամբ



## Ֆոնդի հիմնական բնութագրիչները

Իրավական ձև	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ARM
Ակտիվների կառավարիչ ընկերությունը	Amundi ACBA Asset Management CJSC
Պահառու և ռեեստրավարը	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ
Ֆոնդի ստեղծման ամսաթիվը	11/03/2014
Ֆոնդի արժույթը	ՀՀ դրամ
Ֆոնդի եկամուտների բաշխումը	Ֆոնդի եկամուտները վերաներդրվում են
ՉԱԱ-ի հաշվարկման հաճախականությունը	Օրական
Բաժանորդագրության վճարը	0%
Կառավարչի պարգևավճարի մեծությունը՝ ներառյալ պահառուի պարգևավճարը (%)	1,00%
Պարգևավճար՝ կախված եկամտաբերությունից	0%
Մարման վճարի առավելագույն մեծությունը (%)	2,00%

## Իրավական տեղեկատվություն

Ֆոնդի վերավերյալ սույն փաստաթուղթը կրում է տեղեկատվական և ոչ պայմանագրային բնույթ: Ֆոնդի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի կանոններում, որը հրապարակված է Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում ([www.amundi-acba.am](http://www.amundi-acba.am)): Ֆոնդում ներդրումները կապված են ռիսկերի հետ, մասնավորապես ֆոնդի զուտ ակտիվների արժեքը կարող է տատանվել, իսկ ֆոնդի ակտիվների հաշվին կատարված ներդրումների արժեքը՝ ինչպես բարձրանալ, այնպես էլ՝ նվազել: Եթե այլ բան նշված չէ, սույն տեղեկատվական թերթիկում ներառված տեղեկատվության աղբյուրը Ամունդի-ԱԿԲԱ-ն է: Տեղեկատվական թերթիկները հրապարակվում են ամսական կտրվածքով: